

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.09.2020թ. թիվ 2011693411 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<26>> 10 2020թ. 7-13 13543

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Գոռ Գրիգորյանի ՄԴ/143105-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Թորոմանյան փողոցի 30 տան բնակիչ Գոռ Գրիգորյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.09.2020թ. թիվ 2011693411 որոշմանը՝ նշելով, որ հետադարձ է կատարել լուսացույցի դեղին լույսի ազդանշանի ներքո և խոչընդոտ չի ստեղծել երթևեկության այլ մասնակիցների համար, հետևաբար իրավախախտումն ունի նվազ նշանակություն:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ թիվ 2011693411 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

<< կառավարության <<<< ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին: Ըստ նույն որոշման 18-րդ կետի՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի <<Կանգ-գիծ>> գծանշման (կամ 6.16՝<<Կանգ-գիծ>> նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար և այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար: **Ըստ նույն որոշման 19-րդ կետի՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը:**

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ գետեղված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուի արարքն արձանագրված խաչմերուկում առկա լուսացույցի վրա դիմումատուի <<Կանգ-գիծ>> գծանշումը հատելու պահին միացված է եղել լուսացույցի դեղին՝ արգելող ազդանշան: Այսպես՝

- տեսանյութի 11:44:24-րդ վարկյանին միանում է լուսացույցի դեղին արգելող ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև,
- դիմումատուի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է միայն տեսանյութի 11:44:29-րդ վարկյանին, երբ դեռ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի դեղին արգելող ազդանշանը:

Տեսանյութի ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ լուսացույցի արգելող դեղին ազդանշանի ժամանակ դիմումատուի ավտոմոբիլը գտնվել է <<Կանգ-գիծ>> գծանշման առջև անշարժ վիճակում, ուստի հերքվում է նաև դիմումատուի կողմից << կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջի ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ դիմումատուն հնարավորություն ուներ կանգնել առանց կտրուկ արգելակման:

Վերը նշված փաստերի վերլուծության արդյունքում դիմումատուի իրավախախտման կատարած լինելու փաստը կասկած չի հարուցում:

Ինչ վերաբերվում է դիմումատուի պնդմանն՝ նվազ նշանակություն կիրառելու վերաբերյալ, ապա անհրաժեշտ եմ համարում նշել, որ պատասխանատվությունը վրա է հասել Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը խախտելու համար, իսկ այդ հոդվածի մասի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածով **արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու կարգ սահմանված չէ**, հետևաբար վարորդի արարքը չի կարող գնահատվել նվազ նշանակություն ունեցող:

Այսպիսով, հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 30.09.2020թ. թիվ 2011693411 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Գոռ Գրիգորյանին:



Ե.Կարապետյան